

Համաձայնագիր

Մենք Հայաստանի Հանրապետության Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը՝ ի դեմս կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանի, և Վրաստանի Հանրապետության Թբիլիսիի թիվ 24 դպրոցը՝ ի դեմս դպրոցի տնօրեն Գիա Մուրզուլիայի, գործելով Հայաստանի և Վրաստանի ԿԳ նախարարությունների հավանությանն արժանացած «Հայ-վրացական հանրակրթական կամուրջներ» նախագծի շրջանակում և զարգացնելով այն, ելնելով Վրաստանի և Հայաստանի ժողովուրդների միջև փոխադարձ հարգանքի և փոխըմբռնման անհրաժեշտությունից, որոնց հիմքում մեր ժողովուրդների հարևանությունն ու համագործակցությունն են, մեր նախնիների դարերով ստեղծած հոգևոր և մշակութային արժեքների բազմազանությունը՝ պայմանավորվում ենք հետևյալի մասին.

- սկսել մեր կրթական հաստատությունների մտերմացման՝ փոխադարձ հարստացնող գործընթացը.
- անցկացնել համատեղ կրթական-մշակութային միջոցառումներ, մշակել և իրականացնել ուսումնական նախագծեր.
- փոխադարձաբար հանդես գալ իբրև հեղինակային մանկավարժական ծրագրերի փորձագետ.
- համատեղ կազմել ուսումնական ծրագրեր, տպագիր և էլեկտրոնային ուսումնական նյութեր.
- կազմակերպել սովորողների փոխանակում.
- շարունակել ուսուցիչների փոխանակումը, իրականացնել ուսուցիչների վերապատրաստման ծրագիր:

Հուսով ենք, որ Թբիլիսիի թ. 24 դպրոցում կսկսվի հայոց լեզվի ուսուցումը սովորողների ընտրությամբ, իսկ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում՝ մեր նախաձեռնությամբ շարունակվում է վրացերենի խորացված ուսուցումը, որը կնպաստի երկու ժողովուրդների մշակութային և տնտեսական նորարարություններին:

Համաձայնագիրը կնքվում է երկու հավասարազոր օրինակից՝ հայերեն և վրացերեն:

Թբիլիսիի թ. 24 դպրոցի տնօրեն՝

Գիա Մուրզուլիա

ստորագրություն



հասցե՝ ք. Թբիլիսի, Բաքվի 1

հեռ.՝ (00995) 32 238 39 49

էլ. հասցե՝ murgulia24@yahoo.com



Երևանի «Մխիթար Սեբաստացի»

կրթահամալիրի տնօրեն՝ Աշոտ Բլեյան

ստորագրություն



հասցե՝ ք. Երևան, Ա. Բաբաջանյան 25

հեռ.՝ (374)10 74 11 12, 091 43 10 99

էլ. հասցե՝ info@mskh.am, bleyan@mskh.am

